ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«ՄՈԳՈ» ունիվերսալ վարկային կազմակերպություն սահմանափակ պատասխանատվության ընկերության միակ մասնակցի՝ «ԱՍ ԱԼՊՍ ԻՆՎԵՍԹՄԵՆԹՍ» բաժնետիրական ընկերության 26.01.2017թ. որոշմամբ

ՓՈՓՈԽՎԱԾ Է
«ՄՈԳՈ» ՈՒՎԿ ՍՊԸ միակ մասնակցի՝ «ԱՍ ԱԼՊՍ ԻՆՎԵՍԹՄԵՆԹՍ» բաժնետիրական ընկերության 27.11.2017թ. թիվ 004 որոշմամբ

«ՄՈԳՈ» ՈՒՎԿ ՍՊԸ միակ մասնակցի՝ «ԱՍ ԱԼՊՍ ԻՆՎԵՍԹՄԵՆԹՍ» բաժնետիրական ընկերության 06.03.2018թ. թիվ 009 որոշմամբ

Հիմնադրի ներկայացուցիչ Էդգարս Տուրլայս

(ստորագրություն)

Mesrop Araqelyan

Digitally signed by Mesrop Araqelyan
DN: cn=Mesrop Araqelyan, c=AM, l=Yerevan, st=Yerevan, o=MOGO LLC, email=mesrop.araqelyan@mogo.am
Date: 2018.03.14 15:03:39 +04'00'

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀՀ Կենտրոնական բանկում

ՀՀ Կենտրոնական բանկի նախագահ

Արթուր Ջավադյան

Digitally signed by Arthur Javadyan
Date: 2018.03.30 12:06:26 AMST
Reason: Գրանցված է 28.03.2018թ.

(ստորագրություն)

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

(նոր խմբագրությամբ)

«ՄՈԳՈ» ունիվերսալ վարկային կազմակերպություն սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության

APPROVED by decision of 26/01/2017 of AS ALPS INVESTMENTS stock company, the sole participant of "Mogo" universal credit organization limited liability company

CNANGED
by decision N 004 of 27/11/2017 of AS ALPS INVESTMENTS stock company, the sole participant of "Mogo" UCO LLC

by decision N 009 of 06/03/2018 of AS ALPS INVESTMENTS stock company, the sole participant of "Mogo" UCO LLC

Representative of the founder Edgars Turlajs

(signature)

REGISTERED at the Central Bank

Chairman of the Central Bank of the RA
Artur Javadyan

(signature)

ARTICLES OF ASSOCIATION

(new edition)

"MOGO" universal credit organization limited liability company

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ
2. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
3. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ
4. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՄԱՍԵՐԻ ՕՏԱՐՈՒՄԸ ԵՎ ԳՐԱՎԱԴՐՈՒՄԸ
5. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ
6. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ, ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՒՄԸ
7. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

CONTENT

1. GENERAL PROVISIONS
2. THE ACTIVITY AND FINANCIAL OPERATIONS OF THE COMPANY
3. THE SHARE CAPITAL OF THE COMPANY
4. THE ALIENATION AND PLEDGE OF THE COMPANY SHARES
5. THE MANAGEMENT BODIES OF THE COMPANY
6. THE ACCOUNTINGS, REPORTS AND FINANCIAL CONTROL OF THE COMPANY
7. FINAL PROVISIONS

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. **«ՄՈԳՈ» ունիվերսալ վարկային կազմակերպություն** սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) վարկային կազմակերպության գործունեության իրականացման միջոցով շահույթ ստանալու նպատակով հիմնադրված առևտրային կազմակերպություն հանդիսացող իրավաբանական անձ է, որի կանոնադրական կապիտալը բաժանված է սույն կանոնադրությամբ սահմանված չափերով բաժնեմասերի:

1.2. Ընկերությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսդրությամբ, «Վարկային կազմակերպությունների մասին» և «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքներով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ:

1. GENERAL PROVISIONS

1.1. **"MOGO" universal credit organization** limited liability company (hereinafter – The Company) is a legal entity founded as a trade organization with a purpose of profiting from the activity of credit organization, the capital of which is divided into the shares with the amounts defined in these Articles of Association (the "Articles").

1.2. The company is governed by the civil legislation of the Republic of Armenia, RA laws "On Credit organizations" and "On Limited Liability Companies", other legal acts and these Articles.

1.3. Ընկերության ֆիրմային անվանումն է՝

Հայերեն լրիվ՝ In Armenial full:	«ՄՈԳՈ» ունիվերսալ վարկային կազմակերպություն սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
Կրճատ/In short	«ՄՈԳՈ» ՈՒՎԿ ՍՊԸ
Ռուսերեն լրիվ՝ In Russian full:	«МОГО» универсальная кредитная организация Общество с Ограниченной Ответственностью
Կրճատ/In short	«МОГО» УКО ООО
Անգլերեն լրիվ՝ In English full:	«MOGO» universal credit organization» Limited Liability Company
Կրճատ/In short	«MOGO» UCO LLC

1.4. Ընկերության գտնվելու վայրը և իրավաբանական (փոստային) հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, Պարոնյան փողոց 8 շենք, տարածք 4:

1.5. Ընկերությունը Օրենքով սահմանված կարգով գրանցվում է Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկում (այսուհետ՝ ԿԲ): Գրանցվելու պահից Ընկերությունը ձեռք է բերում իրավաբանական անձի կարգավիճակ և ստանում է վարկային կազմակերպության գործունեության լիցենզիա:

1.6. Ընկերությունը ունի իր ֆիրմային անվանմամբ և խորհրդանիշով կլոր կնիք, դրոշմներ և ձևաթղթեր:

1.7. Ընկերության գործունեության ժամկետն անսահմանափակ է:

1.8. Ընկերության միակ մասնակիցն է հանդիսանում «ԱՍ ԱԼՊՍ ԻՆՎԵՍԹՄԵՆԹՍ» բաժնետիրական ընկերությունը (գրանցված Լատվիայի օրենքներին համապատասխան, գրանցված Ձեռնարկությունների Ռեգիստրում, 40103684497 միասնական գրանցման համարի ներքո, իրավաբանական հասցե՝ Լիեպայա, Յուրաս փողոց 12, LV-3401, Լատվիա):

Ընկերության միակ մասնակիցը իրականացնում է սույն կանոնադրությամբ կամ ՀՀ օրենսդրությամբ սահմանված մասնակիցների ընդհանուր ժողովի իրավասությունները:

1.3. The Company firm name is:

In Armenial full:	«MOGO» universal credit organization Limited Liability Company
In short	«MOGO» UCO LLC

1.4. The location and legal (postal) address of the Company is: 8 Paronyan Street, office 4, Yerevan, Republic of Armenia.

1.5. The Company is registered in the Central Bank of the Republic of Armenia (hereinafter referred to as CB) as established by Law. The Company acquires the status of a legal entity and gets a credit organization activity license upon registration.

1.6. The Company has a round seal, stamps and blanks with the Company name and symbol.

1.7. The activity term of the Company is unlimited.

1.8. The only participant of the Company is AS ALPS INVESTMENTS stock company duly organized under the laws of Latvia, registered with the Register of Enterprises under unified registration number 40103684497, legal address: Liepaja, Juras iela 12, LV-3401, Latvia). The only participant of the Company implements the authorities defined by these Articles or the participants' general meeting as defined by RA legislation.

2. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Ընկերությունը որպես ձեռնարկատիրական գործունեություն իրականացնում է վարկային կազմակերպության գործունեություն, այն է՝ ներգրավվում է փոխառություններ և (կամ) կնքում Օրենքով սահմանված նմանատիպ գործարքներ և (կամ) տրամադրում վարկեր կամ կատարում Օրենքով սահմանված այլ ներդրումներ:

2.2. Ընկերությունը կարող է իրականացնել Օրենքով վարկային կազմակերպությունների համար սահմանված ֆինանսական գործառնություններ, ներառյալ՝

ա) ներգրավել փոխառություններ և (կամ) կնքել նմանատիպ գործարքներ, բացառությամբ պարտատոմսերի և հրապարակային օֆերտաներով միջոցների ներգրավվման.

բ) տրամադրել վարկեր, փոխառություններ, իրականացնել պարտքի կամ առևտրային գործարքների ֆինանսավորում, ֆակտորինգ.

գ) տրամադրել երաշխիքներ.

դ) թողարկել արժեթղթեր, ինչպես նաև իր հաշվին և իր անունից արժեթղթերով գործարքներ կատարել.

ե)մատուցել վարկային կազմակերպության գործունեության հետ կապված վճարահաշվարկային ծառայություններ.

զ) մատուցել ֆինանսական գործակալի (ներկայացուցչի) ծառայություններ, կառավարել այլ անձանց ներդրումները, իրականացնել հավատարմագրային (լիազորագրային) կառավարում.

է) գնել, վաճառել և կառավարել բանկային ոսկի և ստանդարտացված ձուլակտորներ և մետաղադրամ.

ը) իրականացնել ֆինանսական վարձակալություն (լիզինգ).

թ) ի պահ ընդունել թանկարժեք մետաղներ, քարեր, ոսկերչական իրեր, արժեթղթեր, փաստաթղթեր և այլ արժեքներ.

ժ) մատուցել ֆինանսական խորհրդատվություն.

ի) ստեղծել և սպասարկել հաճախորդների վարկարժանության տեղեկատվական համակարգ, իրականացնել պարտքերի հետ ստացման գործունեություն.

2. THE ACTIVITY AND FINANCIAL OPERATIONS OF THE COMPANY

2.1. The Company implements credit organization activity as entrepreneurial activity, namely attracts loans and (or) concludes similar transactions defined by Law and (or) provides credits or makes other investments as defined by Law.

2.2. The Company may implement the financial operations defined by the Law for the credit organizations, including:

a) attract loans and (or) conclude similar transactions, except bond funds and attraction via public offers,

b) to provide credits, loans, to implement financing of the debts and other commercial transactions, factoring,

c) to provide guarantees,

d) to issue securities, as well as to implement transactions with securities at own its expense and on its behalf,

e) to provide payment services connected with the activity of credit organization,

f) to provide services of financial agent (representative), to administer the investments of other people, to implement entrusted management of property,

g) to purchase, to sell and to administer banking gold and standard bullions and coins,

h) to implement financial leasing,

i) to accept for storage precious metals, stones, jewelry, securities, documents and other valuables,

j) to provide financial consultation,

k) to create and serve informative center of clients creditworthiness, to implements the activity of debt collection,

l) to implement activities typical to credit organizations, accepted in the international

լ) Կենտրոնական բանկի համաձայնությամբ իրականացնել վարկային կազմակերպություններին բնորոշ միջազգային պրակտիկայում ընդունված գործառնություններ:

Ընկերության ֆինանսական գործառնություններից բացառություն են կազմում կանխիկ արտարժույթ գնել և վաճառելը, այդ թվում՝ դրամի և արտարժույթի ֆյուչերսների, օպցիոնների և նման այլ գործարքների կնքումը:

2.3. Ֆինանսական գործառնություններից բացի Ընկերությունն իրավունք ունի իրականացնել վարկային կազմակերպությունների համար Օրենքով և Կենտրոնական Բանկի նորմատիվ իրավական ակտերով չարգելված այլ գործունեություն:

practice with the consent of the Central Bank.

The purchase and sale of the foreign currency in cash, including conclusion of futures, options of dram and foreign currency, as well as other similar transactions are considered as exceptions from the financial operations of the Company.

2.3. Besides financial operations the Company is entitled to implement other activity not forbidden by the Law and Central bank normative acts for the credit organizations.

3. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ

3.1. Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 500 000 000 (հինգ հարյուր միլիոն) ՀՀ դրամ, որը բաժանված է 50 000 000 (հիսուն միլիոն) բաժնեմասերի. մեկ բաժնեմասի անվանական արժեքը կազմում է 10 (տասը) ՀՀ դրամ:

3.2. Կանոնադրական կապիտալը սահմանում է պարտատերերի շահերը երաշխավորող Ընկերության գույքի նվազագույն չափը:

3.3. Ընկերության կանոնադրական կապիտալի բոլոր բաժնեմասերը լրիվ վճարված են և պատկանում են սույն Կանոնադրության 1.8 կետում նշված Ընկերության միակ մասնակցին:

3.4. Ընկերության կանոնադրական կապիտալը կարող է փոփոխվել Կանոնադրությամբ և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

3. THE SHARE CAPITAL OF THE COMPANY

3.1. The share capital of the Company is AMD 500'000'000 (five hundred million) which is divided into 50'000'000 (fifty million) shares, the nominal value of each share is 10 (ten) AMD.

3.2. The share capital defines the minimum amount of the Company property guaranteeing the creditors interests.

3.3. All the shares of the Company are completely paid and belong to the Company's sole paticipant as defined in the clause 1.8. of these Articles.

3.4. The share capital of the Company may be changed as established by Articles and RA legislation.

4. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՄԱՍԵՐԻ ՕՏԱՐՈՒՄԸ ԵՎ ԳՐԱՎԱԴՐՈՒՄԸ

4.1. Բաժնեմասի՝ երրորդ անձին վաճառքի դեպքում (բացառությամբ Ընկերության մյուս մասնակցին փոխանցելուն) Ընկերության մասնակիցերն ունեն նախապատվության իրավունք վաճառվող բաժնեմասի նկատմամբ: Նախապատվության իրավունքից օգտվելու ժամկետը 1 (մեկ) ամիս է՝ Ընկերության

4. ALIENATION AND PLEDGE OF THE COMPANY SHARES

4.1. In case of the sale of a share to a third party (other than a transfer to another participant) the participants of the Company have the right of first refusal to the share to be sold. The term for exercising the right of first refusal is 1 (one) month of the day when notice on the sale of share is submitted to the Board of

Խորհրդին բաժնեմասի վաճառքի մասին ծանուցելու օրվանից սկսած (“*Նախնական շրջան*”):

the Company (the “*Election Period*”).

4.2. Ընկերության այլ մասնակիցների (եթե այդպիսիք գոյություն ունեն) նախապատվության իրավունքի համապատասխանեցումն ապահովելու համար, Ընկերության իր բաժնեմասը վաճառող մասնակիցը պետք է Ընկերության Խորհրդին ներկայացնի գործարքի նախագիծ (“*Գործարքի նախագիծ*”) միաժամանակ ծանուցելով բաժնեմասի օտարան մասին (“*Ծանուցում*”):

4.2. In order to ensure compliance with the right of first refusal of Company's other participants (if existing), the participant selling his/her Company's share has to submit a draft transaction document (the “*Draft Transaction Document*”) to the Board of the Company concurrently with giving notice on alienation of the share (the “*Notice*”).

4.3. Ընկերության յուրաքանչյուր այլ մասնակից Նախնական շրջանում իրավունք ունի Ընկերության Խորհրդին ծանուցել, որ ցանկանում է ձեռք բերել առաջարկվող բաժնեմասը Ընկերության Խորհրդին ներկայացված Գործարքի նախագծում սահմանված գնով և պայմաններով պատվիրված նամակի կամ էլեկտրոնային փոստի միջոցով (“*Ձեռքբերման Ծանուցում*”):

4.3. Each other Company's participant within the Election Period is entitled to give notice to the Board of the Company that he/she wishes to acquire the offered share at the price and on the terms and conditions set forth in Draft Transaction Document given to the Board of the Company, by way of registered letter and by way of electronic mail (the “*Acquisition Notice*”).

4.4. Եթե Նախընտրական շրջանում Ընկերության որևէ այլ մասնակից չի ներկայացնում Ձեռքբերման Ծանուցում, բաժնեմասը վաճառող մասնակիցն իրավունք ունի առաջարկվող բաժնեմասը վաճառել երրորդ անձին Գործարքի Նախագծում սահմանված գնով և պայմաններով (ենթակա է 4.8 կետով սահմանված համաձայնության):

4.4. If none of the other Company's participants gives such Acquisition Notice within the Election Period, the selling participant may sell the offered share to the third party at the price and on the terms and conditions contained in the Draft Transaction Document (subject to the consent prescribed in clause 4.8)

4.5. Ընկերության այլ մասնակիցների կողմից Նախնական շրջանում Ձեռքբերման Ծանուցում չուղարկելը կամ առաջարկվող ամբողջ բաժնեմասը Գործարքի նախագծին համապատասխան չգնելը համարվում է նախապատվության իրավունքից հրաժարում:

4.5. Failure by the other Company's participants to deliver the Acquisition Notice within the Election Period or to purchase the entire offered share as per Draft Transaction Document shall constitute a waiver of such other participant's right of first refusal contemplated hereby.

4.6. Եթե Ընկերության մեկից ավելի մասնակիցներ ցանկանում են օգտագործել իրենց նախապատվության իրավունքը, նրանցից յուրաքանչյուրը իրավունք կունենա գնել վաճառվող բաժնեմասի մի մասը մինչև նախապատվության իր իրավունքից օգտվելն ունենցած բաժնեմասերի անվանական արժեքին համամասնորեն:

4.6. If more than one participant of the Company wishes to exercise the right of first refusal, then each such participant shall be entitled to purchase a portion of the offered share pro rata to the nominal value of the share owned by such participant prior to exercising the right of first refusal.

4.7. Նախապատվության իրավունքը կարող է միայն իրականացվել ամբողջ առաջարկվող

4.7. For avoidance of doubt, the right of first refusal can only be exercised in respect of the

բաժնեմասերի նկատմամբ, այլ ոչ դրա մի մասի:

4.8. Մասնակցի կողմից Ընկերության իր բաժնեմասը (կամ դրա մի մասը) թույլատրվում է փոխանցել (օտարել) երրորդ անձանց միայն Մասնակիցների Ժողովի ուղղակի համաձայնությամբ: Փոխանցման համաձայնության վերաբերյալ որոշումը կայացվում է ժողովին ներկա մասնակիցների ձայների առնվազն երկու երրորդով:

4.9. Արգելվում է մասնակցի կողմից Ընկերության իր բաժնեմասը գրավ դնելը՝ առանց Ժողովի ուղղակի համաձայնության: Գրավադրման համաձայնության վերաբերյալ որոշումը կայացվում է ժողովին ներկա Ընկերության մասնակիցների ձայների առնվազն երկու երրորդով:

entire offered share and not in respect of a part of such share.

4.8. A participant may transfer the share of the Company (or a part thereof) only with direct consent of the Participants' Meeting. Resolution relating to transfer of a share is passed with the favorable vote of at least 2/3 of the votes of Company's participants represented at the Meeting.

4.9. It is forbidden to pledge a Company share by the participant without the direct consent of the Meeting. Resolution relating to pledge of a share is passed with the favorable vote of at least 2/3 of the votes of Company participants represented at the Meeting.

5. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ.

5.1. Ընկերության կառավարման մարմիններն են.

- Մասնակիցների ընդհանուր ժողովը (այսուհետ՝ Ժողով)
- Տնօրենների խորհուրդը (այսուհետ՝ Խորհուրդ)
- Գլխավոր տնօրենը:

5. MANAGEMENT BODIES OF THE COMPANY

5.1. The management bodies of the Company are:

- Participants General Meeting (hereinafter referred to as Meeting)
- Directors board (hereinafter referred to as Board)
- Director General.

ԺՈՂՈՎԸ

5.2. Ընկերության կառավարման բարձրագույն մարմինը Ժողովն է, որն ունի Ընկերության կառավարման և գործունեության ցանկացած հարցի վերջնական լուծման իրավունք:
Ժողովը կարող է լինել հերթական կամ արտահերթ: Ժողովները հրավիրվում են Գլխավոր տնօրենի կողմից:

5.3. Ընկերությունը պարտավոր է ամեն տարի գումարել հերթական Ժողովը՝ Ընկերության գործունեության տարեկան արդյունքները հաստատելու համար: Ժողովը հրավիրվում է Գլխավոր տնօրենի կողմից տարեկան մեկ անգամ ֆինանսական տարվա ավարտից ոչ շուտ, քան երկու ամիս և ոչ ուշ, քան չորս ամիս անց: Խորհրդի, վերստուգողի կամ ընկերության

THE MEETING

5.2. The highest managing body of the Company is the Meeting, which has the rights of final settlement of any issue relating the management and the activity of the Company.
The Meeting may be ordinary or extraordinary. Meetings shall be called by Director General.

5.3. The Company is obliged to convene ordinary Meeting every year for confirming the annual results of the Company activity. The ordinary Meeting is convened by the Director General once in a year not earlier than two months and not later than four months after the end of financial year. Extraordinary Meeting

բաժնեմասերի 10%-ից ավելիին տիրապետող մասնակիցների նախաձեռնությամբ կարող են հրավիրվել Ժողովի արտահերթ նիստեր Ընկերության շահերից ելնելով: Գլխավոր տնօրենը պետք է հայտարարի Ժողովի հրավիրման մասին՝ հրապարակելով, որ ժողովը կկայանա նման ժողովի հրավիրման պահանջը ստանալուց հետո 2 շաբաթվա ընթացքում:

5.4. Ժողովի նիստերը կարող են գումարվել ինչպես Հայաստանում, այնպես էլ արտասահմանում: Ժողովի նիստերի մասնակիցները կարող են մասնակցել ինչպես անձամբ, այնպես էլ ներկայացուցիչների միջոցով, որոնք պետք է ներկայացնեն գրավոր լիազորագիր կամ ներկայացնեն այլ փաստաթղթեր, որոնք կհավաստեն իրենց լիազորությունը: Լիազորագիրը կամ այլ ներկայացուցիչների լիազորությունը հավաստող փաստաթղթերը պետք է կցվեն Ժողովի արձանագրությանը: Խորհրդի կողմից հեռակա քվեարկության անցկացման կարգ սահմանվելու դեպքում որոշումները կարող են կայացվել նաև «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքով սահմանված հեռակա քվեարկության կարգով՝ սահմանած կարգին համապատասխան:

5.5. Ընդհանուր ժողովն իրավազոր է, եթե դրան մասնակցում են ընկերության մասնակիցների ձայների ընդհանուր թվի կեսից ավելիին տնօրինող մասնակիցները: Ժողովի որոշումները ընդունվում են մասնակիցների ընդհանուր ձայների թվի մեծամասնությամբ, բացառությամբ կանոնադրությամբ կամ օրենքով նախատեսված դեպքերի: Ժողովի որոշումները ընդունվում են բացառապես հաստատված օրակարգի մեջ ներառված հարցերով, բացառությամբ այն դեպքի, երբ Ժողովին մասնակցում են մասնակիցների ձայների ընդհանուր թվի 100% տիրապետող մասնակիցները, ինչպիսի դեպքում հաստատված օրակարգից դուրս հարցերի վերաբերյալ որոշումները ընդունվում են միաձայն:

5.6. Ժողովի բացառիկ իրավասությանն են պատկանում հետևյալ հարցերը.

ա) ընկերության գործունեության հիմնական ուղղությունների որոշումը, ինչպես նաև կազմակերպություններ հիմնադրելու կամ

sessions can be convened by the initiative of Board, auditor or the participants owing more than the 10% of the Company shares if this is necessary in the interests of the Company. The Director General shall announce that a Meeting is called no later than within 2 (two) weeks from the date of the receipt of the request for the same to be called.

5.4. The Meeting sessions may be convened both in Armenia and abroad. The members of the Meeting may participate both in person and by the representatives who have to submit a power of attorney granted in writing or present current documents confirming authorization of such other representatives. The power of attorney and the documents confirming the authorization of other representatives must be attached to the minutes of the Meeting. In case of stating an order of absentee voting by the Board, the decisions may also be made in the order of absentee voting defined by the RA law "On the limited liability companies" in accordance with the set order.

5.5. The Meeting is competent, if participants owing more than the half of total number of the votes are participating. The decisions of the Meeting are made by a majority of the total number of participants votes, except the cases defined by the Articles and by law. The Meeting may make decisions only with respect to the issues on the agenda, except the cases when the participants owing the 100% of total number the participants' votes are present at the Meeting. In this case the decision relating the items not included on the agenda are made unanimously.

5.6. The Meeting has a exclusive right to make decisions regarding:

a) determination of the main directions of the Company activity, as well as founding the

նրանց մասնակցելու հարցերը.

բ) ընկերության կանոնադրության և ընկերության կանոնադրական կապիտալի չափի փոփոխումը.

գ) ընկերության տնօրենների խորհրդի և գործադիր մարմինների ձևավորումը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը, ինչպես նաև ընկերության գործադիր մարմնի լիազորություններն առևտրային կազմակերպությանը կամ անհատ ձեռնարկատիրոջը (այսուհետ՝ կառավարիչ) տալու հարցերը.

դ) վերստուգիչ հանձնաժողովի (վերստուգողի) ընտրությունը և լիազորությունների վաղաժամկետ դադարումը.

ե) տարեկան հաշվետվությունների և տարեկան հաշվեկշռի հաստատումը.

զ) ընկերության շահույթն ընկերության մասնակիցների միջև բաշխելու մասին որոշումն ընդունելը.

է) ընկերության ներքին գործունեությունը կարգավորող փաստաթղթերի (ընկերության ներքին փաստաթղթեր) ընդունումը (հաստատումը).

ը) ընկերության կողմից արժեթղթերի թողարկման մասին որոշումն ընդունելը.

թ) ընկերության աուդիտի իրականացման որոշումն ընդունելը.

ժ) ընկերության վերակազմակերպման և լուծարման մասին որոշումն ընդունելը.

ժա) լուծարման հանձնաժողովի նշանակումը և լուծարման հաշվեկշռի ընդունումը.

ժբ) Ընկերության ղեկավարների դեմ դատական գործընթաց սկսելու և ավարտելու վերաբերյալ որոշումների ընդունումը, ինչպես նաև նման գործերով ներկայացուցիչ հաստատելը,

ժգ) Ընկերության Ներկայացուցչությունների, մասնաճյուղերի, հիմնարկների և ֆոնդերի ստեղծում,

ժդ) Խորհրդի, Գլխավոր տնօրենի կամ Մասնակիցների կողմից ներկայացված այլ հարցերի լուծումը,

ժե) ՀՀ օրենսդրությամբ և (կամ) ընկերության կանոնադրությամբ նախատեսված այլ հարցերի լուծումը:

5.7. Ժողովը կարող է հրավիրվել պատվիրված կամ փոստի միջոցով ուղարկված նամակի

companies or participating in them

b) change of the Company Articles and the amount of Company share capital

c) formation of the Company directors board and executive bodies and the early termination of their authorities, as well as transfer of the authorities of the Company executive body to a commercial or private entrepreneur (hereinafter referred to as administrator)

d) election of the audit committee (auditor) and the early termination of authorities of the latter

e) confirmation of the annual reports and annual balance

f) distribution of the profit between the Company participants

g) confirmation of the documents regulating the internal activity of the Company (internal documents of the Company)

h) issuing the securities by the Company

i) implementation of the Company audit

j) the reorganization and liquidation of the Company

ja) appointment of the liquidation committee and confirmation of liquidation balance

jb) bringing an action against the Company managers, as well as confirmation of the representatives for such cases

jc) foundation of the Company representative offices, branches, institutions and founds,

jd) settlement of matters submitted by the Board, Director General or by the participants.

je) other issues defined by the RA legislation and (or) the Company Articles.

5.7. The Meeting shall be called by registered mail letters or letters sent by courier no later

միջոցով, որը պետք է ուղարկվի Ժողովի նշանակման օրվանից ոչ ուշ, քան երկու շաբաթ առաջ: Պատվիրված կամ փոստի միջոցով ուղարկված նամակի փոխարեն Ընկերության մասնակցին կարող է ծանուցում ուղարկվել էլեկրոնային փոստի միջոցով, եթե վերջինս նախապես տվել է իր գրավոր համաձայնությունը և տրամադրել է այն հասցեն, որին պետք է ուղարկի ծանուցումը: Հրավերում պետք է նշվի Ժողովի ամսաթիվը, ժամը և վայրը, ինչպես նաև մանրամասն օրակարգը:

5.8. Եթե բաժնեմասը պատկանում է մեկից ավելի անձանց, ապա նշված անձիք կարող են բաժնեմասի հետ կապված իրավունքները իրականացնել համատեղ ներկայացուցչի միջոցով:

than two weeks before the appointed date of the Meeting. In place of a registered mail letter or a letter sent by courier, a notice may be sent to a participant by electronic mail if the latter has previously consented to that in writing, giving the address to which the notice should be sent. The invitation should specify the date, time and place, as well as the detailed agenda of the Meeting.

5.8. If a share is held by more than one person jointly, such persons may only exercise the rights attaching to the share through a joint representative.

ԽՈՐՀՈՒՐԴԸ.

5.9. Ընկերության տնօրենների խորհուրդն իրականացնում է Ընկերության ընդհանուր ղեկավարումը՝ իր իրավասության սահմաններում և կարող է լուծել ցանկացած հարց, որը չի հանդիսանում Ժողովի բացառիկ իրավասությունը:

5.10. Ընկերության Խորհուրդը կազմված է երեք անդամից, որոնց լիազորությունների տևողությունը սահմանափակված չէ: Խորհրդի անդամները նշանակվում և ազատվում են Ժողովի կողմից: Ժողովը Խորհրդի անդամների կազմից նշանակում է Խորհրդի նախագահ, ով կազմակերպում է Խորհրդի աշխատանքները և նախագահում է նիստերին:

5.11. Խորհրդի նիստերը գումարվում են Խորհրդի նախագահի կողմից Խորհրդի անդամների, ընկերության ձայների ընդհանուր թվի 10%-ի ավելիին տիրապետող մասնակիցների, գլխավոր տնօրենի կամ վերստուգողի նախաձեռնությամբ: Նիստերը կարող են իրականացվել ինչպես Հայաստանում, այնպես էլ արտերկրում: Խորհդի անդամները նիստերին մասնակցում են անձամբ: Խորհուրդն իրավազոր է, եթե դրան մասնակցում են Խորհրդի անդամների 2/3-րդը: Խորհրդի որոշումները ընդունվում են Խորհրդի անդամների ընդհանուր թվի 2/3-րդով:

5.12. Խորհրդի իրավասությանն են պատկանում հետևյալ հարցերը.

BOARD

5.9. The Board of the Company implements the general management of the Company within the scopes of its authorities and can settle any issue which is not in the exclusive authorities of the Meeting.

5.10. The Company Board is composed of three members, whose authorities term is not limited. The Board members are appointed and dismissed by the Meeting. The meeting appoints a Board chairman from the Board members, who organizes the Board works and presides the sessions.

5.11. The Board sessions are convened by the Board chairman by the initiative of the Board members, the participants owing more than the 10% of the total number of the votes, the Director General or the auditor. The sessions may be convened both in Armenia and abroad. The Board members participate in the sessions in person. The board is competent in case the 2/3 of the members take part in it. The Board decisions are made by the 2/3 of the total number of Board members.

5.12. The Board is authorized to resolve the following issues:

ա) Ժողովի օրակարգի հաստատում, հարցերի առաջադրում ու նախապատրաստում,

բ) օրենքով նախատեսված և այլ հարցերի ներկայացումը ժողովների քննարկմանը,

գ) Ընկերության ֆինանսական տարեկան հաշվետության նախագծի, ներառյալ՝ շահույթի բաշխման առաջարկի հաստատում և ներկայացում Ժողովի վերջնական հաստատմանը,

դ) Ընկերության ղեկավար պաշտոնատար անձանց (խորհրդի նախագահի կամ անդամի, տնօրենի, գլխավոր տնօրենի կամ վարչության, տնօրինության անդամի) աշխատանքի վարձատրության պայմանների որոշումը,

ե) արտաքին աուդիտն իրականացնող անձի ընտրություն և վարձատրության, Ընկերության վերստուգողի վարձատրության և ծախսերի փոխհատուցման չափերի սահմանումը,

զ) Ընկերության գույքի շուկայական արժեքի որոշումը՝ օրենքով սահմանված կարգով,

է) Ընկերության ամենամյա ծախսերի նախահաշվի և կատարողականի հաստատումը,

ը) Ընկերության Ժողովի կողմից Խորհրդի իրավասությանը փոխանցված հարցերի վերաբերյալ որոշումների կայացումը, բացառությամբ Ժողովի բացառիկ իրավասության հարցերի:

Բացի վերը նշված հարցերից, Խորհրդի բացառիկ իրավասությանն են պատկանում նաև հետևյալ գործարքների և գործողությունների իրականացման համար որոշում կայացնելը և համաձայնության տալը, առանց որի Ընկերության գործադիր մարմինը իրավունք չունի նման գործարքներ կամ գործողություններ իրականացնել կամ կնքել.

ա) համաձայնության տրամադրում Ընկերության անունից գործարք կատարելու մասին, եթե որևէ տեսակի մեկ կամ մի քանի գործարքների արժեքը կամ Ընկերության ֆինանսական վիճակի վրա ազդեցությունը (մեկ ֆինանսական տարվա ընթացքում) գերազանցում է 50 000 000 (հիսուն միլիոն) ՀՀ դրամը և այս գործարք(ներ)ը դուրս է (են) Ընկերության առօրյա գործունեությունից:

բ) համաձայնության տրամադրում Ընկերության ակտիվների վաճառքի կամ որևէ այլ կերպ օտարման վերաբերյալ, ինչպես նաև Ընկերության ակտիվների որևէ կերպ ծանրաբեռնման վերբերյալ, որը ընդհանուր

a) confirmation of the Meeting agenda, proposing and preparation of issues,

b) representation of other issues defined by law to the meeting discussion

c) confirmation of the draft of the Company annual financial report, including the proposal of profit distribution and submission to the final confirmation of the Meeting,

d) determination of the remuneration terms of the Company managerial staff (board chairman or member, Director General or member of directorate or department)

e) selection and remuneration of the person implementing the external audit, determination of amount of the auditor remuneration and compensation of the expenses,

f) determination of the market value of the Company property in the order defined by law

g) confirmation of the precalculation and execution document of Company annual expenses.

h) decision-making of the issues transferred to the authority of the Board by the Meeting except the issues of the exclusive authority of the Meeting

Besides the mentioned issues, the Board has the exclusive right on decision-making on and giving consent for the implementation of the following transactions and actions, without which the Company executive body is not entitled to implement or conclude such actions and transactions.

a) grant of consent to the conduct of a transaction on behalf of the Company if the value or impact of a single or a series of transactions of the same type (during one business year) on the financial condition of the Company exceeds AMD 50 000 000 (fifty million drams) and the transaction(s) is/are made outside the ordinary course of business of the Company;

b) grant of consent to the sale or other alienation of the Company's assets, as well as

առմամբ կգերազանցի 50 000 000 (հիսուն միլիոն) ՀՀ դրամը մեկ ֆինանսական տարվա ընթացքում և այս գործարք(ներ)ը դուրս է (են) Ընկերության առօրյա գործունեությունից:

գ) Ընկերությանը պատկանող մտավոր սեփականության ներառյալ արտոնագրերի, գյուտերի, ծրագրային ապահովման, նոու-հաուի, ապրանքային նշանների (բառային/համակցված), կամ ինտերնետ տիրույթների, օգտագործման իրավունքի տնօրինման կամ որևէ երրորդ անձի վճարովի կամ անվճար փոխանցման վերաբերյալ համաձայնության տրամադրում, եթե դա տեղի չի ունենում Ընկերության առօրյա գործունեության շրջանակներում

դ) համաձայնության տրամադրում այնպիսի աշխատողների աշխատանքի ընդունման վերաբերյալ, որոնց տարեկան զուտ աշխատավարձը գերազանցում է 50 000 000 (հիսուն միլիոն) ՀՀ դրամը, նման աշխատողների աշխատանքի պայմանների որևէ փոփոխության և նման աշխատողներին աշխատանքից ազատման վերաբերյալ

ե) որևէ այլ գործունեություն, որը տարբերվում է Ընկերության առօրյա գործունեությունից, եթե նման գործունեության արժեքը կամ Ընկերության ֆինանսական վիճակի վրա ազդեցությունը (մեկ ֆինանսական տարվա ընթացքում) գերազանցում է 50 000 000 (հիսուն միլիոն) ՀՀ դրամը:

զ) բացի վերը նշված դեպքերից ՀՀ օրենսդրությամբ սահմանված խոշոր գործարքների մասին որոշման կայացումը: Ընկերության համար խոշոր գործարքի չափ է սահմանվում 50 000 000 (հիսուն միլիոն) ՀՀ դրամը:

Սույն կետում եվրոյով նշված չափերը անհրաժեշտության դեպքում ենթակա են արտարժույթով հաշվարկման նման գործարքի կնքման կամ գործողության կատարման պահին ՀՀ ԿԲ սահմանված փոխարժեքով:

encumbrance of the Company's assets in any manner, which exceeds in total AMD 50 000 000 (fifty million drams) during one business year, conducted outside the ordinary course of the Company's business;

c) grant of consent to a disposition of transfer of a right to use intellectual property constituting the property of the Company, including patents, inventions, software, know-how, trademarks or internet domains in favor of a third party for pay or without compensation, unless the same takes place in the ordinary course of the Company's business;

d) grant of consent to the hiring of employees whose total annual pay exceeds AMD 50 000 000 (fifty million drams), any changes to the employment terms of such employees and dismissal of such employees;

e) grant of consent to any other activity that varies from the day-to-day course of the Company's business if the value or impact of that activity (during a single business year) on the financial condition of the Company exceeds AMD 50 000 000 (fifty million drams);

f) Decision on conclusion big deals set by RA legislation rather than above mentioned cases. The amount of big deals for Company is AMD 50 000 000 (fifty million drams).

The amounts set in EUR in this point are to be calculated in foreign currency with exchange rate set by RA CB at the moment of conclusion of such deals or making such activity.

ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ

5.13. Ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է Ընկերության գործադիր մարմինը՝ գլխավոր տնօրենը, որն ընտրվում է Ժողովի կողմից:

5.14. Ընկերության գլխավոր տնօրենը՝

ա) ներկայացնում է Ընկերությունը երրորդ

DIRECTOR GENERAL

5.13. The management of the current activity of the Company is implemented by the Company executive body, Director General, who is elected by the Meeting.

5.14. The Director General of the Company:

անձանց հետ հարաբերություններում,

բ) առանց լիազորագրի գործում է ընկերության անունից, այդ թվում՝ ներկայացնում է նրա շահերը և տալիս է լիազորագրեր՝ Ընկերության անունից ներկայացուցչություն կատարելու իրավունքի համար, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր.

գ) աշխատանքի է ընդունում և ազատում Ընկերության աշխատողներին, տալիս է հրամաններ՝ Ընկերության աշխատակիցներին պաշտոնների նշանակման, նրանց տեղափոխման և ազատման վերաբերյալ, կիրառում է խրախուսման միջոցներ և նշանակում է կարգապահական տույժեր.

դ) տնօրինում է ընկերության գույքը և կնքում գործարքներ՝ սույն կանոնադրությամբ սահմանված դեպքերում ստանալով Խորհրդի համաձայնությունը (որոշումը),

ե) բանկերում բացում է Ընկերության հաշվեհամարներ,

զ) իրականացնում է Ընկերության ընթացիկ ղեկավարման հետ կապված այլ գործառույթներ, որոնց իրականացումը վերապահված չէ Ընկերության մյուս կառավարման մարմիններին կամ որոնք սահմանված են ՀՀ օրենսդրությամբ:

a) represents the Company in the relations with third persons,

b) acts on behalf of the Company without the power of attorney, including represents its interests and issues power of attorneys for the representation on behalf of the Company, including power of attorney with the right of reauthorizing,

c) hires and dismisses the Company employees, gives orders relating the appointment, transfer and dismissal of the Company employees, applies incentives and disciplinary penalties,

d) disposes the Company property and concludes transactions, after obtaining agreement (decisions) of the Board in cases specified in the Articles,

e) opens accounts in the banks for the Company,

f) implements other actions relating the current management of the Company, the implementation of which is not within the authorities to the other management bodies of the Company or which are defined by RA legislation.

6. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ, ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՒՄԸ ԵՎ ԱՈՒԴԻՏԸ

6.1. Ընկերությունը վարում է հաշվապահական հաշվառում ՀՀ օրենսդրության և ԿԲ կողմից սահմանված պահանջներին համապատասխան: Ընկերության հաշվապահական հաշվառման վարման համար պատասխանատու է գլխավոր հաշվապահը, ով իրականացնում է «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքով սահմանված իրավունքներն ու պարտականությունները:

6.2. Ընկերությունը կազմում և օրենքով սահմանված ժամկետներում հրապարակում է

6. THE ACCOUNTINGS, REPORTS FINANCIAL CONTROL AND AUDIT OF THE COMPANY

6.1. The Company keeps the accounts in accordance with the requirements defined by the RA legislation and CB. The chief account is responsible for the keeping of the accounts of the Company, who implements the rights and obligations defined by the RA law "On the Accounting".

6.2. The Company prepares and publishes annual financial, as well as other obligatory

տարեկան ֆինանսական, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ և ԿԲ նորմատիվ իրավական ակտերով սահմանված պարտադիր այլ հաշվետվություններ:

6.3. Ընկերության վերստուգիչ հանձնաժողովի գործառույթները կատարում է վերստուգողը, ով նշանակվում է Ժողովի կողմից: Ընկերության վերստուգողը իրականացնում է Ընկերության ֆինանսական գործունեության վերահսկումը, ներառյալ՝ Ընկերության կնքած գործարքների, ղեկավարների տրված հանձնարարականների, Ընկերության ներքին իրավական ակտերի, ընթացիկ հաշվետվությունների և հաշվապահական հաշվառման վարման օրինականության ստուգում: Ընկերության վերստուգողը պարտավոր է նաև կատարել ֆինանսական վերահսկման վերաբերյալ Ժողովի կամ Խորհրդի հանձնարարությունները:

6.4. Յուրաքանչյուր տարի Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության ստուգման նպատակով Ընկերությունը ներգրավում է օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով աուդիտորական ծառայությունների իրականացման իրավունք ունեցող անկախ աուդիտ իրականացնող անձի՝ կնքելով նրա հետ համապատասխան պայմանագիր:

6.5. Ընկերության մասնակցի գրավոր պահանջով Ընկերությունը պետք է պահանջը ստանալուց հետո 7 (յոթ) օրվա ընթացքում ապահովել մասնակիցների մուտքը դեպի և (կամ) տրամադրել հետևյալ փաստաթղթերի պատճենները՝ Ընկերության Կանոնադրություն, տարեկան և միջանկյալ ֆինանսական հաշվետվություններ, Ընկերության տարեկան և միջանկյալ հաշվետվություններ, վերստուգիչների կարծիքներ և վերստուգման հաշվետվություններ, Ժողովի արձանագրությունը կամ այլ փաստաթղթեր, որոնցում արձանագրված են Ժողովի որոշումները, մասնակիցների ցուցակը, այլ կորպորատիվ փաստաթղթեր, որոնք պետք է լինեն հրապարակային գործող օրենսդրության համաձայն, եթե դրանք չեն պարունակում գաղտնի տեղեկություն, առևտրային գաղտնիք: Մասնակիցը կամ մասնակիցների խումբը, որոնք տիրապետում են բաժնեմասերի ½-ը և ավելին, և Ընկերությանը ներկայացրել են գրավոր պարտավորություն չբացահայտելու գաղտնի

reports defined by RA legislation and CB normative legal acts in the terms defined by law.

6.3. The functions of the Company audit committee are implemented by the auditor, who is appointed by the Meeting. The Company auditor implements the control of the financial activity of the Company, including checking the legality of the transactions concluded by the Company, the assignments of the managers, the internal legal acts of the Company, current reports and keeping of the accounts. The Company auditor is also obliged to implement the assignments of the Meeting and the Board relating the financial control.

6.4. Each year an independent auditor having the rights to render audit services in the order defined by the laws and other legal acts is involved by the Company for the purpose of reviewing the financial-economic activity of the Company by signing an appropriate contract with that auditor.

6.5. Upon a written request of a participant, the Company must, no later than within 7 (seven) days after the receipt of the request, provide the participants with an opportunity to have access to and (or) provide copies of the following documents: the Articles of the Company, annual and interim financial reports, annual and interim reports of the Company, auditor's opinions and audit reports, minutes of the Meeting or other documents recording the resolutions of the Meeting, list of participants, other corporate documents that have to be public pursuant to the existing legislation if they do not constitute confidential information, commercial (trade) secret. A participant or a group of participants possessing or holding 1/2 and more of the shares and having submitted to the Company a written undertaking not to disclose confidential information, commercial

տեղեկություններ և առևտրային գաղտնիքները (Ընկերության կողմից սահմանված ձևով) իրավունք կունենան մուտք ունենալ Ընկորության բոլոր փաստաթղթերին: Այն դեպքում, երբ հնարավոր չէ պարզել մասնակցի ինքնությունը, ով պահանջել է փաստաթղթերը, Ընկերությունը կարող է մերժել հնարավորություն տալ մասնակցին ծանոթանալ և (կամ) տրամադրել փաստաթղթերի պատճենները:

(trade) secrets (in the form established by the Company) shall have the right to have access to all the documents of the Company. In case it is impossible to determine the identity of the participant who has requested the documents, the Company may refuse to give a possibility to that participant to get acquainted and (or) provide with copies of the documents.

7. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

7.1. Սույն կանոնադրությամբ չկարգավորված հարցերը կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ, Ընկերության ներքին իրավական ակտերով:

7.2. Ընկերությունը կարող է վերակազմակերպվել կամ լուծարվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով:

7.3. Սույն կանոնադրությունը կազմված է հայերեն և անգլերեն լեզուներով: Հայերեն և անգլերեն տարբերակների միջև անհամապատասխանության դեպքում նախապատվությունը տրվում է հայերեն տարբերակին:

7. FINAL PROVISIONS

7.1. The issues not regulated by these Articles are regulated by the RA legislation, internal legal acts of the Company.

7.2. The Company may be reorganized or liquidated in the cases and order defined by the RA legislation.

7.3. These Articles are made in English and Armenian. In case of discrepancy between the Armenian and English versions of the Articles, the Armenian version shall prevail.